


435



- ~~976~~
- 583
- 2004
- 2.5.201
- БЕРЕГИТЕ КНИГУ!**
- ОНА служит не одному, а многим.
- Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.
- 4) Не портите переплета. При чтении заворачивайте его в бумагу.
 - 3) Не загибайте углов у страниц имейте лучше бумажную закладку.
 - 4) Не перелистывайте страниц грязными и мокрыми руками.
 - 5) Если у вас имеется в доме заразный больной, то заявите об этом в библиотеку при возврате книги.

КОГДА КНИГА ВЗЯТА	
7/12	11/19
2/26	18/85
6/19	16/19
4/0	20/05
10/32 1/4	
18/12	
9/59	
5/15	
18/24	
9/4	
12/28	

83-F
Q-71

ՊԱՌԵԼ ԱԹԵԴՏՏ

83 ✓ 6899

Ա Ա Տ Ա Ե Ւ

፩፻፲፭፪

ՀԱՐ ՄՏՔՈՎ 2Ե

Գերմանիակաց թարգմ.



Санкт-Петербург
Государственное Училище
Изящных Искусств
1936 г.
Инвентаризаци

Թ Ի Ֆ Լ Ւ Ս

Ճպարտան ՄՊ. Յարտածէի, Նիկոլ. փ. տ. 21
1898

1 5 2 5 0
1 5 2 5 0
1 5 2 5 0

Дозволено цензурою Тифлисъ, 13 го Мая
1897 г.

46792-1



2795
41

46899.

Մ Ա Տ Ս Ա Ն Ի

Մէկ մեծ, մամուռ քարի վերայ, որը
բարձր ծառի ստուերի տակ էր ընկած, նըս-
տած էր մէկ փոքրիկ աղջիկ։ Նա առանց այս
ու այն կողմը նայելու, կամաց և զգուշու-
թեամբ հաստ ու կոպիտ թելից գուլպայ էր
գործում։

Եյն ճանապարհը, որի ավին ընկած էր այդ
քարը, տանում էր դէպի մի մեծ, ընդարձակ
հովիտ, իսկ աւելի հեռուս, դէպի մի սարի
բարձր գագաթը։ Այդտեղ, չորս կողմը ծած-
կուած էր փառաւոր, անուշահոտ կանաչով և
այդ փափուկ կանաչ խոտի մէջ վազգում էր
մէկ պստիկ, սպիտակ գառնուկ, նորա վզից
կախուած էր մի զանգակ և նա երթեմն եր-
թեմն գալիս էր այդ աղջկայ մօտ, որը նորան
շփում և փայփայում էր։

Մէկ անդամ այդ սարից ցած իջաւ մի
պարոն քաղաքացու շորերով, որի ուսից կա-
նաչ շերիտով կախուած էր մէկ բուսաբանա-

կան տուփի և ձեռքում ունէր մի մեծ ծաղկէ փունջ։

Երբ նա տեսաւ այդ գուլպայ գործող աղջկան, կանգնեց և ասաց՝ «լսիր դու փոքրիկ ծաղիկ քաղելիս, սարի ստորոտում, կանաչ մէջ մատիցս վայր ընկաւ իմ ոսկէ մատանին և կորաւ. երկար ժամանակ է արդէն վնտրում եմ, բայց չլարողացայ գտնել։ Ես շատ կուզէի այդ մատանին նորից ձեռք բերել, այդ պատճառով խոստանում եմ թեզ մի տալէր (ոռութ), եթէ որ դու գտնես և ինձ հասցնես։ Ես ձեր գիւղի տանուտէրին իմ հասցէս կըտամ, որ դու իմանաս նորանից և ինձ թերես այս մօտակայ քաղաքը։ Ուրեմն ուղիւմ ես, իմ կորցրած մատանին գտնել, սիրելի աղջիկս։»

Աղջիկը գուլպէն էլ չգործելով, լսում էր պարոնին, բայց չէր նայում նորա երեսին և երբ նա վերջացրեց, պատասխանեց՝ «ոչ, պարոն, ես ձեր կորցրած մատանին չեմ կարող գտնել, որովհետեւ պէտք է իմ մեծ մօրս սպասեմ, որ գայ ինձ տուն տանի։ Բայց ահաւ ականջները սրելով աւելացրեց նա—«լսում էք ձայներ, դոքա մեր գիւղի երեխաներն են, որ գալիս են այս ճանապարհով բարձրանալու զէպի բլուրները, ելակ հաւաքելու համար. այ, նորա կըկարողանան վնտրել ձեր մատանին։»

Ցետոյ նա նորից ձեռքն առաւ հաստ ճաղերն ու սկսեց շարունակել իւր ձեռքագործը։ Պարոնը զարմացած մնաց, լսելով այդ խօսքերը և նորան կասկածելի թուաց, որ մի այդպիսի աղքատ հագնուած աղջիկ քաշւում էր ծառայել նորան և մի տալէր ստանալ իւր աշխատանքի հևմար։

Նա հեռացաւ և բաւական ժամանակ սարից գար ՚ի վար իջնելուց յետոյ միայն, տեսաւ երեխաների մի խումբ, որոնց ձայնը դեռ շատ հեռուից, բարձրութեան վերայ, աղջկայ սուր ականջները լսել էին և որոնք կողովներն ու ամանները ձեռքերին, գնում էին ելակ քաղելու։

— «Լսեցէր, երեխայք», ասաց նոցա պարոնը. «ձեղանից մէկն ու մէկդ կուզենար մի տալէր ստանալ։»

— «Այս, այս, այս» կանչեցին երեխաները մէկը միւսի ետեկից։

— «Իէ՞հ, ուրեմն» ասաց պարոնը՝ «որոնեցէր իմ ոսկէ մատանին, որ ես այս կողմերում ծաղիկ քաղելիս կորցրի. և ով որ գտնի ու ինձ թեզէ, նա կըստանայ իմ խոստացած վարձը։ Դուք իմ անունս ու հասցէս կիմանաք ձեր գիւղի տանուտէրից։»

Խչպէս ճեճզուկի մի երամակ, այդ ամ-

բողջ խումբը, տղայ ու աղջիկ իրար հրելով,
խօսելով ու վազվելով, ցրուեցին զանազան
ուղղութեամբ։ Նոցանից ամեն մէկն ուղում էր
քաղդաւորն ինքը լինել և լեռան չորս կողմի
ամեն մէկ բոյսի ու տերեփ մէջ պսպղում էին
երեխայական սիրուն, որոնող աշքեր։

Իսկ փոքրիկ աղջիկը մենակ նստած քարի
վերայ, գարծում էր շարունակ իւր գուլպէն և
ականջ էր գնում գառնուկի վզից կախուած
դանդակին և գուրեկան ու ընրոյշ ձայնով կան-
չում էր նորան, երբ թւում էր իրան, թէ
գառնուկը շատ հեռու է գնացել։

Նա չէր նկատում, երբ արել փառաւոր
ուկու ու ծիրանու մէջ, ծածկում էր լեռնե-
րի կատարների ետքը։ Նա ուշադրութիւն չէր
դարձնում գեղեցիկ վերջնալոյսի և պարզ, կա-
պուտակ երկնքում փայլվող տստղերի վերայ։

Միայն այն ժամանակ, երբ այդ երեխան
հեռուից լսում էր մէկ փայտի գետնին. խփուե-
լու ձայնը, գաղարում էր իւր ձեռագործն ա-
նելուց և թելի կծիկն ու գուլպէն հաւարելով,
սպասում էր, մինչև որ մի պառաւ կին իւր
ձեռնափայտի վերայ յենուած, բոլորավին մօ-
տենում էր նորան։

Այն ժամանակ աղջիկը տեղից վեր էր կե-

նում և կանչում էր ուրախ ուշախ՝ «Քարի լ-
րիկուն։ մեծ մայրիկ»։

«Քարի լրիկուն, Մարիամիկ» ասաց
նոյնակս պառաւ կինը, երեխայի ձեռքը բըռ-
նելով և զգուշութեամբ նորա հետ սարից ցած
իջնելով։ Նոցա ետից զնում էր և գառնուկը,
իւր զանգակը զնզգնգացնելով։

«Եո այսօր շատ գործեղի» ասում էր ճա-
նապարհին Մարիամիկը — «և երևակայիր մեծ
մայրիկ զան» աւելացրեց նա՝ «մէկ օտար պա-
րոն, որը լկոներում բոյսեր քաղելիս կորցրել
է իւր ոսկէ մատանին, ինձ առաջարկում էր մէկ
տալէր, եթէ որ ես նորա մատանին գտնէի»։

«Մէկ տալէր» զարմացած բացականչեց
պառաւը։

«Այն, մէկ տալէր» շարունակեց աղջիկը՝
«զու արդեօր տեսնէլ ես մէկ տալէր, մեծ մայ-
րիկ»։

«Ճատ վազուց» պատասխանեց նա հառա-
չելով — «մենիք աղքատ մարդիկս, այդպիսի մեծ
փող չունեկը»։

«Ա՞խ, եթէ ես այդ տալէրն ունենայի»
ասաց Մարիամիկը՝ «զու որչափ բան կառ-
նէիր ըեղ համար, մեծ մայրիկ, այնպէս չէ,
բայց չէ որ ես չեմ կարող այդ մատանին
փնտոել»։

«Դու, խեղճ թոռնիկս» ասաց պառաւ կինն ախ քաշելով:

«Բայց ուրիշ երեխաներ, որոնք գնում էին ելակ քաղելու, նոքա որոնում էին. լսիր, ահա գալիս են նորա». ասաց աղջիկը կանգնելով և ականջ դնելով:

Քիչ ժամանակից յետոյ, բոլոր երեխաների խումբը կողովները լիրը լցրած, անցան պառաւ կնոջ և աղջկայ առաջից: Այդ օրն երկար տևեց ելակ քաղելը, որովհետեւ նորա ժամանակի մեծ մասը զրագուեցին մատանին վնասուելով:

«Մատանին գտամբ» հարցրեց նոցա Մարիամիկը. բայց նշ մի ուրախ «այո» չլսուեց նոցա բերանից: Երկար ժամանակ ամրող լեռան շուրջը, բոյսերի մէջ որոնելը զուր էր անցել և նոցանից ոչ մէկը չէր բաղդաւորուել գտնելու այդ ոսկի մատանին:

Միւս առաւօտ մեծ մայրը տարաւ իւր թոռնիկին դարձեալ դէպի սարի ստորոտը, որտեղ գառնուկի համար մննդաբար կանաչ էր բումնում. բայց այս անգամ ուրիշ տեղ ընտրեց Մարիամիկի համար ու ինքը տան գնաց: Մարիամիկը մի ստուերոտ տեղ, ծառի կոճի վերայ նստեց և սկսեց իւր ձեւադործը. իսկ սպիտակ գառնուկը վզի զանգակը թափ տա-

լով, վազվզում էր իւր սիրելի ընկերուհու՝ Մարիամիկի շուրջը: Երբեմն երբեմն Մարիամիկը կանչում էր իրան մօտ գառնուկին, որ իւր զլուխը գնում էր աղջկայ գոգը: Գառնուկին մի առանձին ուրախութիւն պատճառելու համար, Մարիամիկն այն ծառի տակից, որտեղ ինքը նստած էր, քաղում էր կանաչ խոտ և իւր բռի միջից կերակրում էր նորան:

Եւ այդպէս, այդ օրը գառնուկին ուտեցնելիս, յանկարծ մի ճնկոց լսուեց և շոշափելով ձեռքի մէջ նա զպաց մի փոքրիկ, կոր ու չսր բան, որը գառնուկին երեխ խոտի հետ միասին ատամներով շոշափել էր և այդ ժամանակ այն մեղմ ճնկոցը լսելի էր եղել:

«Այս ի՞նչ կարող է լինելք. ասաց աղջիկն ինքն իրան:

Նա իւր նստած տեղից խոտ քաղելու ժամանակ, առանց իմանալու, բռնել էր այդ փոքրիկ առարկան, որն այնտեղ ընկած է եղել:

«Այդ մի մատանի չէր արգեօրք»:

«Մատանին» մտածում էր նա գողգողալով.—«բոլորը վնասուեցին, բայց չգտան, իսկ ես, որ ամենից խեղճն եմ, գտայ և իմ գառնուկս է պատճառը, որ ես գտայ այս մատանին. այս, իմ սիրելին, պատիկ, սիրունիկ գառնուկս: Այս, երանի թէ մեծ մայրիկս այստեղ

լինէր և խսկոյն խմանար այդ մասին»։

Եւ մատանին գրպանում պահելով, ուրախութիւնից սկսեց գգուել ու համբուրել գառնուկին։

Յետոյ նա հանդարտ նստած մնաց, նորից ձեռքն առաւ իւր ձեռագործը և մինչդեռ թելի օղակները մէկը միւսի ետեից արագարագ ընկնում էին ճաղերի վերայ, նորա փոքրիկ, աշխատասէր մատներով, նա երազում էր շատ հրաշալի բաների մասին՝ թէ ինչ կառնի իւր բարի մեծ մօր համար, երբ այդ գտնուած մատանու համար ստանայ մէկ տալէր։

Բայց արդեօք դա մատանին էր. արդեօք դա այն պարոնի կորցրած ոսկի մատանին էր։ Ա՛խ, երանէ՛ թէ շուտով դար մեծ մայրիկս, երանէ՛ թէ շուտով մթնէր։ Եւ Մարիամիկն այդպէս մտածելով, բոլորովին մոռացաւ ուտել չոր, ցամաք հացի կտորը, որը հետը բերել էր գրպանում դրած։

Վերջապէս արել մայր մտնելու վերայ էր։ Երիկուայ մեղմ ու դուրեկան բամին փշեց և գովացրեց Մարիամիկին։ Արդէն մութն ընկնում էր, բայց Մարիամիկը շարունակ գործում էր, մինչև որ լսեց մեծ մօր ձեռնափայտի գետնին խփուելու ձայնը։

Եւ երբ այդ ձայնը մօտեցաւ, աղջիկն յուդ-

մունքից դողլողալով կանչեց՝ «մեծ մայրիկ, մեծ մայրիկս, մատանին, ես մատանին գտայտնս, սա ուղիղ ոսկէ մատանի է» և մօտեցրեց մեծ մօրն իւր գտած առարկան։

Պառաւ կինը զարմացած առաւ ձեռքն այդ օղակը։ «Սա դեղին գոյն ունի և կարելի է որ ոսկի լինի. մենք կը հարցնենք տանուտէրին», ասաց մեծ մայրը։ «Բայց դու ինչպէս գտար, իմ խեղճ երեխաս։ Եւ մինչև որ մեծ մայր ու թոռ ձեռք ձեռքի տուած մօտենում էին գառնուկի հետ միասին իրանց զիւղին, Մարիամիկը պատմեց՝ թէ ինչպէս զարմանալի կերպով այդ մատանին իրան ձեռքն ընկաւ, երբ նա զառնուկի համար կանաչ էր բազում։

Երբ տանուտէրը գտնուած մատանին տեսաւ, պատմեց նոցա, որ այդ թանգաղին կորուստը պատկանում է մէկ օտար պարոնի և շատ ուրախացաւ, որ խեղճ, պստիկ Մարիամիկն եղաւ գորա գտնողը։

Նա պառաւին տուեց պարոնի հասցէն և միւս օրը մեծ մայր ու թոռնիկ իրանց ամենալաւ շորերը հագած, ձեռք ձեռքի տուած, ճանապարհ ընկան դէպի մօտակայ մեծ բազարը։ Թէկ պառաւ մեծ մօր համար ոտով երկար ճանապարհ գնալը շատ ծանր էր, բայց

մէկ տալէր ստանալու միտրը նորան ոյժ էր տալիս առաջ ու աւելի առաջ գնալու:

Վերջապէս նորա քաղաք հասան. տանուտիրոջ գրած հասցէով, շուտով գտան այն պարոնի տունը և երբ յայտնեցին իրանց գալու պատճառը, նոցա ներս տարան մի տենեակ և ասացին, որ այնտեղ սպասեն:

Քիչ յետոյ սենեակի դուռը բացուեց և ներս մտաւ մի պարոն, որի ձայնն խսկոյն ճանաչեց Մարիամիկը:

«Յարգելի պարոն» ասաց մեծ մայրը. — «իմ թոռս ձեր մատանին գտել է, որը դուք մեր լեռներում կորցրել էիք»:

«Յիրաւի, սա իմ մատանին է», բացականչեց պարոնն առնելով ոսկի օղակն ու անցկացնելով իւր մատը:

«Բայց» շարունակեց նա, աղջկան աւելի մօտիկից նայելով, որ խորն ընկած աշրերով ու ուրախութիւնից կարմրած երեսով, կանգնած էր պարոնի առաջ — «բայց չէ որ սա այն փարրիկն է, որ այն անգամ ժամանակ չունէր իմ մատանին վինտրելու. բայց տեսար, որ վերջը դու գտար»: Այդ ասելով նա դուրս քաշեց գրպանից իւր քսակը, հանեց նորա միջից մի տալէր թղթագրամ և Մարիամիկին մօտեցրեց, բայց աղջիկն իւր ձեռքը շերկարացրեց:

«Նա չի տեսնում» հառաչելով ասաց պառաւ կինը. — «իմ թոռնիկս կոյր է»:

«Կոյր է» հարցրեց տխուր ձայնով պարոնը. — «և վաղուց է արդէն»: Ու այդ ասելով նա փողը գրեց Մարիամիկի ձեռքի մէջ:

«Մի, պարոն, այն օրուանից, ինչպէս որ աշխարհը է եկել». գանգատուեց մեծ մայրը: — «Եւ սորա կուրութեան պատճառով ու մարդու մահուան մասին դարդ անելով, սիրտը ցաւով լի, մեռաւ այս աղջկայ թշուառ մայրը: Եւ ես այս կոյր որբին բերի ինձ մօտ ու մեծացրի. հիմայ էլ սովորեցրել եմ գուլպայ զործել, որ զբաղուի, շատ չձանձրանայ և երբ մեր գառնուկը սարերում արածում է, սա շատ աշխատափրութեամբ անում է իւր ձեռագործը. և ձեր մատանին էլ գտել է այն ժամանակ, երբ գառնուկի համար կանաչ խոտ է բաղելիս եղել»:

«Եւ սորա աշքերի համար ոչ մի բժշկի չէք դիմել». հարցրեց պարոնը:

«Բժշկի» բացականչեց պառաւ կինը. — «ախս, պարոն, ինչ էր ասում. այդ մեր աղքատներիս բանը չէ. մեզ փող ով է տուել, որ վճարենք բժշկի և բացի այդ, ոչ մէկ բժիշկ օգնել չի կարող, բանի որ սա կոյր է ծնուած»:

«Որ այդպէս է» ասաց պարոնը. — «Ես աշ-

քի բժիշկ եմ և արդէն մի քանի կոյրերի առողջացրել եմ: Ով գիտէ, գուցէ Աստուած դիտմամբ էր այսպէս կարգադրել, որ ձեր թռուը լինի իմ մատանին գտնողը, որպէս զի ես կարողանամ օդնել այս փորրիկին»:

«Բայց...» ասաց պառաւը վախվախելով:

«Առանց բայցի» վրայ բերեց պարոնը. — «Փող՝ տալու մասին դուք հոգս մի քաշէք, որովհետև ես աղքատ մարդկանց ձրի եմ բըժշկում: Այնուամենայնիւ», աւելացրեց նա. — «Ես ձեզ շուտով կարող եմ ասել, թէ արդեօք այս երեխային կարելի կը լինի օդնել. ապա ինձ հետ արի»: Այդ խօսքերով, նա բռնեց Մարիամիկի փորրիկ, արևից այրուած ձեռքն ու տարաւ միւս սենեակը:

Մի քառորդ ժամից յետոյ, որ մեծ մօրը շատ երկար երեաց, որովհետև նա մեծ անհամբերութեամբ սպասում էր նոցա, երկուսն էլ նորից ներս մտան:

«Մեծ մայրիկ, մեծ մայրիկ զան» կանչեց Մարիամիկը. — «Ես պէտք է տեսնել սովորեմ»:

«Ռւղիկ, կը տեսնի սա», հարցրեց պառաւը, չաւատալով այդ բանին:

«Անշուշտ», հաստատեց բժիշկը: — «Եթէ որ դուք այս երեխային ինձ մօտ թողնէք, ես խոստանում եմ սորա աշբերը բանալ»: Մեծ

մայրն ուրախութիւնից ձեռքերը տրարեց և արտասուրի խոշոր կաթիւները վազեցին նորածեր աշբերից: «Այս ինչ երջանկութիւն է, ինչ ուրախութիւն է», հեծկատալով ասում էր նա: — «Ա՛յս, եթէ սորա մայրը կենդանի լինէր»...

Մարիամիկն իւր մեծ մօր հետ այլ ևս վերադարձաւ գիւղ. նա մնաց մարդասէր բըժշկի տանը: Եւ երբ պառաւ մեծ մայրը մի քանի ժամանակից յետոյ նորից եկաւ քաղաք, արդէն աղջիկը բժշկուած էր: Մարիամիկն առաջին անգամ տեսաւ իւր սիրելի ու բարի մեծ մօր երեսը:

Եւ նախ քան խեղճ աղջիկը չնորհակալութեան շերմ զգացմունքներով կը վերադառնար իւր հայրենի գիւղը, նա գեռ շատ կարօտ էր մեծ զգուշութեան և խնամքի, որը և գտնում էր իւր բարերարի տանը:

Մարիամիկը հետզհետէ բոլորովին առողջացաւ. նա արդէն պարզ տեսնում էր Աստուծոյ ստեղծած պայծառ աշխարհն ու աշխարհիս բոլոր գեղեցկութիւններն ու հրաշալիքները, որոնք նորան մինչև այդ ժամանակ ծանօթ չէին...

Ազնիւ ու մարդասէր բժիշկը միշտ էլ շատ սիրում էր իւր ոսկի մատանին, բայց այն օրուանից, երբ նա կարողացաւ մի աղքատ,

դժբախտ կոյր երեխայի աչքերին լոյս տալ ու
նորան երջանկացնել, այդ մատանին աւելի
սիրելի ու աւելի թանգարին զարդ դառաւ
նորա համար:

Պատիւա
Հայուա
Տառ Ժայ



այս ուժան մազի պայունը
ներս բայ ունե վոր նոր
զարդարեա բայս մինչ ու ու
ունայ պայմանը բայ ու եան
ու ունան մինչ զարդարեա բայս
ըստուան ու ունան մինչ զարդարեա բայս

Թ. Ա. Զ. Բ. Կ.

Մէկ զարնանային առաւօտ էր այդ, բայց
շատ կանուխ, երբ մարդկանց մեծ մասը զեռ
խորը քնի մէջ է լինում: Մի բաւական աղքատ
խրճիթում ապրում էր մէկ պառաւ լուացարար
կին իւր թուի հետ: Պառաւ կինը հիւանդ
պարկած էր և տանջըում էր ոսկրացաւից: Նա
վաղուց արգէն զարթնել էր և անհամբեր ըս-
պասում էր լոյսը բացուելուն, որ իւր կողքի
աղքատիկ անկողնու մէջքնած թոռնիկին՝ Եղի-
սարէթին ձայն տայ:

«Եղիսարէթ, վեր կաց»: ասաց պառաւ
կինը. — «շուտով կլուսանայ, շտապիր վնա մա-
նուշակ քաղելու»:

Փոքրիկ աղջիկը զեռ քնաթաթաղ, լակով
մեծ մօր խօսքերը, շուտով վեր ելաւ, հազար
իւր մաշուած շորերը, լուացուեց մի կտոր հաց,
զրեց զրպանը և զամբիւլը թեր գցած տանից
դուրս գնաց:

Պառաւ Առաջարկութեա բանի որ ոսկ-



Հ. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

բացաւով չէր հիւանդացել, իրան համար լաւ կառավարւում էր իւր թոռի հետ. իսկ այժմ, երբ նորա ձեռքերն էլ չէին կարող աշխատել, դառն կարիքը ծեծում էր այդ խեղճերի դուռը: Բայց գարունը պստիկ Եղիսաբէթի համար աշխատանք բերեց: — Քաղաքից քիչ հեռու, որտեղ ապրում էր մեծ մայրն իւր թոռնիկի հետ, կար մէկ մարդագետին, ուր գարնանը մեծ քանակութեամբ մանուշակ էր բուժնում և աղքատ մարդկանց հաց էր տալիս, որովհետեւ նորա մանուշակը տանում էին քաղաք ծախելու: Այսպէս որ Եղիսաբէթը սկսեց զրանով պարապել և այդ պատճառով մեծ մայրը նորան այդպէս փառ էր զարթեցնում, որ նա ուրիշներից աւելի շուտ գնայ մանուշակ քաղելու:

Եղիսաբէթը շատ՝ բարի և ուշադիր ազպիկ էր և լաւ էր հասկանում իւր մեծ մօր լրութիւնը, որը թէն շուտ-շուտ բարկանում էր Եղիսաբէթի վերայ, բայց շատ էր սիրում նորան. մանաւանդ հիմայ, որ Եղիսաբէթը կարողանում էր քիշ-շատ աշխատել և աւելի նա մեծ մօր մասին էր հոգս տանում, քան թէ իրան:

Այդպէս փորրիկն Եղիսաբէթը տանից դուրս եկաւ վստահ բայլերով և դեռ լոյսը շբացուած, զնաց իւր գործին: Եւ չնայելով որ Եղիսաբէթն այդպէս փառ էր վեր կացել, բայց նորանից ա-

ւելի վազ զարթել էր մէկը՝ այդ ծեր ագռանի էր, որը ճանապարհի գլխին ծառի վերայ թառած, թշնամական աշքերով շարունակ նայում էր մէկ թռչունի բունին, որից, նա լաւ գիտէր որ շուտով հեռանալու են թռչնիկների ծնողները որպէս զի իրանց ամուր կտուցներով կերակուր բերեն ձագուկների համար: Նա երկի երկար ժամանակ համբերութեամբ սպասել էր, որովհետեւ երբ փորրիկ Եղիսաբէթը զամբիւզը լիքը հաւաքած մանուշակով վերադառնում էր, տեսաւ որ սպասւը մէկ պստիկ թռչնիկի բերանն առած տանում էր իւր ձագերին նախաճաշ: Աղջիկը շտապով գետնից մի քար վերցրեց և գցեց դէպի վեր ագռաւի ետևից, որը իսկոյն վախից վայր գցեց իւր որսը և թռաւ հեռու, երի մի ուրիշ տեղ կերակուր ֆնտրելու: Իսկ նոյն միջոցին մէկ փորրիկ, մոխրագոյն թռչնիկ, Եղիսաբէթի մօտից, գետնի փոշու միջով ցած թռաւ և սկսեց աղիողորմ ծըլծըլվալ: Աղջիկը կռացաւ որ տեսնի և կարծեց թէ ճնճղուկ է. նա շատ պստիկ էր և լաւ թռչել գեռ չէր կարող: Եղիսաբէթն յանկարծ նկատեց, որ նորա մոխրագոյն թևերի վերայ, որտեղից որ կառւցով բռնել էր ագռաւը, արինի կա'ժիշներ են երկում:

«Խեղճ, թռչնիկ». ասաց նա կարեկցու-

թեամբ, բռնելով նորա տաք ու վախից գող-
դողացող մարմինն իւր բոի մէջ։ Եղիսաբէթը
չգիտէր, թէ ինչ անէր այդ անտէր թռչնիկին.
վերջը մտածեց, որ կտանի իւր մեծ մօտ,
որը շուտ-շուտ բժշկում էր իրան ձեռքերը,
երբ լուացքից ճաքճարւում էին և լաւացնում
էր ուրիշ էլի զանազան վէրքեր և վճռեց որ,
երբ այդ թռչնիկի թռերը լաւանան, նորից բաց
թռնի նորան, որ նա ազատ ապրի իրան
համար։

Իսկ մեծ մայրն այդ միջոցին տնրտներա-
լով վերկացաւ, սինեակը մի քիչ կարգի բերեց,
նախաճաշ պատրաստեց. յետոյ նստաւ սեղանի
առաջ, որի վերայ, սրճամանի մօտ դրուած էր
միայն մի կտոր ու հաց և մէկ ամանով էլ
շռու։

«Մեծ մայրիկ, տես ինչ եմ հետօ բե-
րում»։ կանչեց ուրախ չուրախ Եղիսաբէթը,
դեռ դրանը չհասած և լինամբով ծածկելով մի-
ինչ որ բան իւր գոգնոցի մէջ։

«Ի՞նչ հարկաւոր է մեզ այդ պստիկ ծի-
տը». ասաց պառաւ կինը բարկացած, երբ տե-
սաւ Եղիսաբէթի գտած թռչնիկը. — «այս բո-
պէիս նորից գորան յետ տար»։

Եղիսաբէթի աշքերն արտասուրով լցուե-
ցին և նա ասաց տխուր ձայնով «մեծ մայրիկ ջան,

ևս սորան աղատեցի մէկ ագռաւի բերանից և
տես, թէ ինչպէս խղճուկի թերը կծել է ա-
նիրաւ ագռաւը. ես ուզում եմ սորան քո գե-
ղով առողջացնել։

Գետնի վերայ դրուած ծաղկով լի զամ-
բիւղի տեսրը մի-քիչ մեղմացրեց մեծ մօրը, ո-
րովհնտես այդ մանուշակն երբ ծախուէր, էլլ
մի-երկու, երեք օր նոցա հաց կըտար...»

«Նստիր և կեր» ասաց նա Եղիսաբէթի
բաժակը սուրճ լցնելով։ Եղիսաբէթը շատ քաղ-
ցած էր, որովհետեւ իւր գործին լինելով ու այդ
թռչնիկի մասին մտածելով, մոռացել էր ու-
տել իրան հետ տարած հացը։ Նա գեռ գնաց
բերեց մեծ մօր գեղը, զգուշութեամբ բսեց
թռչնիկի վէրքերին և յետոյ նստեց սեղանի ա-
ռաջն ու սկսեց նախաճաշել։

Այդ նեղ, ցածր սենեակում ճանճ շատ
կար, որոնք պառաւ մեծ մօրը անհանգիստ էին
անում. մի մասն էլ ճանճերի այդ բոպէին թա-
փուել էր նախաճաշի սեղանի վերայ. մէկ էլ
յանկարծ, թռչնիկն այդ տանջող ճանճերից մէ-
կին բռնից իւր կտուցով։

«Փու որ սկսես թռչել, այստեղ պէտք է
մնաս.» ասաց մեծ մայրը դառնալով գէպի
թռչունը. եւ նա յանկարծ յիշեց, որ մէկ պն-
դամ մոխրի փռուի մէջ գտնիլ էր մի հին վան-

դակ և մէկ կողմ էր գցել, մտածելով որ իրան պէտք չի գայ և նա խսկոյն գնաց գտաւ վան. դակը, մարբեց, ներս թերեց ու նորեկ պստիկ հիւրին այնտեղ տեղաւորեց:

Եւ երբ ամառն անցաւ ու Եղիսարէթը սկսեց ուսումնարան գնալ, նա գնալիս միշտ խնդրում էր մեծ մօրը, որ լաւ խնամէ իւր թոշնիկին: Այդպէս այդ գետնայարկում, որտեղ ապրում էին նորա, խեղճ աղջիկն ունեցաւ մի մեծ ուրախութիւն և ընկեր: Օրէցօր այդ փոք- րիկ թոշնիկն ընտանի էր դառնում և մեծ մօրն էլ ուրախացնում էր ձանձրալի ճանճերին սչն- չացնելով. նա ուսում էր այդ աղքատ մարդկանց հետ հաց ու շոռ և միմնոյն ժամանակ աւելի ու աւելի մեծանում էր: Հետզհետէ նորա վէր- քերը լաւացան, փետուրները շատացան և նա իւր փոքրիկ վանդակի մէջ թոշկոտում էր ու- րախուրախ, միայն երբ պատուհանը բաց էին անում, նորա վանդակն ամուր կողպում էին, որ նա դուրս չթռչի այնտեղից: Եւ այդ բարի ու լաւ մարդկանց խնամքի համար, նա չնոր- հակալութեան փոխարէն երթեմն սկսում էր մեղմիկ երգել: «Սա երկի մի երգով թռչուն է»: ասում էր պառաւ կինը, բայց որոշել չէր կարող, թէ որ տեսակ թռչունի ցեղին է պատ- կանում և միշտ նորան ասում էր ճնճղուկ:

Մինչդեռ պառաւ մեծ մօր հոգսերն աւելի ու աւելի էին շատանում: Նա շաբաթուայ մէջ մի. երկու օր գնում էր լուացք անելու նոցա մօտ, որոնք բարեսրտութիւնից գեռ կանչում էին նորան. թէս պառաւ կինն այլ ևս ոյժ չու- նէր լուացքը մաքուր լուանալու: Վերջապէս նա տեսաւ, որ ստիպուած է այդ աշխատանքը թողնել և մտնուշակներն էլ արդէն թառամում էին, որոնց ծախուելով նորա մի-քանի ժամա- նակ ապրուստ էին ունենում: Ուրեմն ինչ ա- նէր. — արգեօր պստիկ Եղիսարէթին ուղարկէր մուրալու, թէ ինքն ընկնէր դոնէ գուռ մու- րար. բայց այդ միտքը պառաւ կնոջ համար զարհուրելի էր, որովհետև մինչև այդ ժամա- նակ նա իրան քրտների աշխատանքով էր ապ- րում:

«Լսիր, Եղիսարէթ»: ասաց մէկ երեկոյ մեծ մայրն իւր թոռին: — «Ես էլ լուացք անել շեմ կարող բոլորովին. ինչ անենք ուրեմն: Ես շատ կուգէի սկսել կանաչեղինի առուտուր և դու էլ այդ բանում կարող էիր ինձ օգնել. բայց թէ այդ գործը սկսելու համար ինձ մի քիչ փող է հարկաւոր. որտեղից ես գտնեմ»:

«Ա-խ, սիրելի մեծ մայրիկ»: ասաց Եղի- սարէթը. — «մի դարդ անի, եկ աղաշենք Աստ- ծուն, որ նա մեղ փող տայ, այնպէս չէ»:

«Ո՞րտեղից», հարցրեց մեծ մայրը դառնութեամբ. — «դու հաւատում ես որ փողը կարող է երկնքից իջնել, դու սխալում ես, փողը հազուագիտ բան է»:

«Բայց չե՞ս որ իմ թռչնիկս էլ երկնքից ընկաւ», ասաց փորրիկ աղջիկը.

Այդ միջոցին թռչնիկը, որ իւր վանդակի մէջ բաց պատուհանի առաջն էր, միանվամից սկսեց այնպէս բարձր, քաղցր ու գեղեցիկ երգել, որ երբէք պատահած չէր: Մեծ մայրն ու թռուը լռեցին և զարմացած սկսեցին լսել նորա անուշ դայլայլիկը: Այդ տան վերին յարկում ապրում էր մէկ ծեր մարդ, որը թռչուններ շատ էր սիրում, և մեծ քանակութեամբ տեսակ-տեսակ թռչուններ էր պահում վանդակների մէջ: Նա նոյն այդ ժամանակ իւր սենեակի պատուհանից նայում էր և աւելի ես գլուխը դուրս հանեց, լսելով այդ թռչունի քաղցր ձայնը:

Միւս առաւօտ, երբ Եղիսաբէթն ուսումնարանումն էր, այդ ծեր մարդը ցած իջաւ և զետեայարկի բնակարանի դուռը սկսեց ծեծել: Մեծ մայրը դուռը բանալով բոլորովին ապշած մնաց նորա այդ այցելութեան համար և հարցրեց խոնարհ ողջունելով, թէ արգեօք ի՞նչ է կամենում ողարմած պարոնը:

«Դուք կարծեմ մէկ թռչուն ունէք, եթէ կծախէք, ես ուրախութեամբ կփնեմ», ասաց նա:

«Ճնճղուկը», ասաց պառաւ կինը. — «Կա իմ թռունիկ Եղիսաբէթինն է և նորա միակ ուրախութիւնն է», եւ աւելացրեց՝ որ թէս իրան շատ հարկաւոր է մի քանի կոպէկ, բայց նա դարձեալ չէր ուզենայ դրկել Եղիսաբէթին իւր սիրելի թռչնիկից:

«Դա ճնճղուկ չէ, այլ սոխակ է» պատասխանեց ծեր պարոնը, — «Ի ես այդ թռչունի համար լաւ գին կտամ»:

«Սոխակ է», հարցրեց մեծ մայրը. — դուր համար այդպէս հիանալի է երկում:

«Դէս, ուրեմն այդպէս», վերջացրեց պարոնը, վանդակին մօտենալով և թռչունը զըննելով, — «Ես սորա համար չորս տալէր (մանէթ) կիմարեմ և եթէ ձեր թռուն ուզենայ, թնդ բերէ ինձ, ես ապրում եմ այս տան վերին յարկում»: Այդ ասելով նա կնաց:

«Ստուած իմ, չորս տալէր». բայցականչեց աղքատ պառաւ կինը, ուրախութիւնից լնինելով աթոռի վերայ: «Ով դու երեխայական անմեղութիւն, ով դու սուրբ պարզութիւն. Եղիսաբէթի խօսքը կատարուեց՝ և ինչպէս Ստուած իսկոյն օգնեց մեզ: Ո՞վ կարող էր մտա-

ծել, որ յիրաւի այդ թռչունի հետ միասին,
երկնքից այդքան փող կընկնէր մեզ համար»:

Եղիսարէթը դպրոցից տուն վերադառնա-
լով, իմացաւ մօր պատմածը և խոկոյն տարաւ
տուեց ծեր պարոնին իւր սիրելի թռչնիկը, որն
խոկապէս սոխակ գուրս եկաւ: Եւ թէս նա
տիրեց նորանից բաժանուելով, բայց սրտանց
ուրախանում էր, որ կարողացաւ դորանով օգ-
նել իւր միծ մօրը նա ամեն երեկոյ լսում էր
սոխակի քաղցր, հրաշալի երգը, որը բաց պա-
տուհանի առաջ, Եղիսարէթի սենեակի վերեր
վանդակի մէջ ապրում էր:

Չորս տալէրով մեծ մայրը կարողացաւ
կանաչեղէնի առուտուր սկսել. այդ գործում
օդնում էր նորան և Եղիսարէթը, որը մանու-
շակ ծախելիս մի քիչ սովորել էր առուտուր
անել:

Մեծ մայրն զամեն օր զամբիւղները կա-
նաչեղէնով լի գնում էր իւր տան դրան առաջ
և շուտով այդ մասում ապրող բոլոր տանտի-
կիններն ու խոհարարուհիները սկսեցին նորա-
նից գնել: Եւ այդպէսով նա ունեցաւ լաւ աշ-
խատանք ու նորա հիւանդու ձեռքերը կարող
էին հանգիստ մնալ: Մեծ մայր ու թռու գոհ
իրանց գործից, փառք տալով Աստծուն կա-
ռավարում էին իրանց համար անտրտունջ:

Եւ երբ պառաւ կինն իւր զամբիւղների
առաջը լուռ ու մոնղ նստած մտածում էր,
թէ ինչ կերպ աղատուեց իւր նեղ դրութիւ-
նից, այն ժամանակ ասում էր ինքն իրան՝

«Այս, այս, եթէ որ մեր Տէր Աստուածն
ուղենայ, կարող է այնպէս անել, որ փողն
ինքն իրան ընկնի երկնքից»:



Առաքեցինք ոչ մեծ տառար ողբ ած
ով նախան ճառաւ զան ու լայ դառաւ
այնուր յամ ոչ սկսաւար այն ոչ ով
մասն ով ով նախ ժառանին այս ով
մասնաւ ով ով ով այս այս այս
մուր ով

ՅԱՐ ՄՏՏՔՈՎ ԶԵ

Փոքրիկ Կատարինէն նոր էր ուսումնա-
րանից տուն վերադարձել և գլխարկը հանում
էր նախասենեակում, երբ դրսի դրան զանգակը
քաշեցին։ Կատարինէն իսկոյն դուռը քացեց և
տեսաւ մէկ պստիկ, աղքատ հագնուած տղայի,
շատ գունատ երեսով, որը ձեռքում բռնել էր
մէկ լիքը զամբիւլ, թղթից շինած ծաղիկնե-
րով և թոյլ ձայնով խնդրում էր նորան զնել
իրանից ծաղիկ, աւելացնելով որ ինքը շատ
քաղցած է և ուզում է հաց առնել։

Կատարինէն շատ հաւանեց ծաղիկները
և սաստիկ խղճաց այդ տղային, որը քաղցած
էր և ասաց նորան սիրալիր կերպով «Տուր
ինձ քո ծաղիկները. իմ մայրիկս շատ բարի է.
նա անշուշտ կառնի այս փնջիկներից մի բա-
նիսը»։

Այդ ժամանակ տղայի երեսն ուրախու-
թինից փայլեց և տուեց աղջկան իւր զամ-

բիւղը, որը տարաւ իրանց սեղանատունը, բայց
մօրն այնտեղ չգտաւ։

Յետոյ նա զամբիւլը դրեց մէկ աթոռի
վերայ, իւր դառագրերը պահեց և մտաւ միւս
սենեակը։ Այդ րոպէին նա յանկարծ յիշեց, որ
դեղձանիկին պէտք է ջուր տայ և այդ հոգ-
սով զբաղուեց ու յետոյ գնաց խոհանոց իրանց
աղախնից իմացաւ, որ մայրը տանը չէ, բայց
թէ շատովկ կվերադառնայ։

«Ուրեմն, Լենի, տներ իմ բաժին հացը»
խնդրեց նա աղախնուն, որովհետեւ այդ միջո-
ցին զգաց, որ ինքը շատ քաղցած է։

Եւ մինչև որ Կատարինէն իւր կարագով
հացն ուտում էր, յանկարծ ձեռքը զբանը
տարաւ և գտաւ մի փոքրիկ կտոր շարար, որ
դեռ առաւտուայ իւր բաժնից պահել էր գեղ-
ձանիկի համար։ Շատապով նա տարաւ զցեց
թռչնիկի առաջ այդ կտորը և ուրախանում էր
տեսնելով թէ ինչպէս գեղձանիկը նայում է
շարարի վերայ ու կտցում է և այդ ամենից
յետոյ միայն նա զնաց իւր սենեակը։

Կատարինէն այդ բաներով զբագլուելով
բոլորովին մոռացաւ թղթէ ծաղիկների և դրսի
դրանը սպասող տղայի մասին։

Պուրսը կանգնող փոքրիկ տղան Ռոբէրտը
մի աղքատ այրի կնոջ որդի էր։ Ռոբէրտի մայրը

տկարութեան պատճառով, չկարողանալով ծանր աշխատանք անել. իսկ կար, կամ ուրիշ ձեռագործ էլ նորան պատուիրող չէր լինում, այդ պատճառով նա մտածեց՝ արուեստական ծաղիկներ շինել մետարսէ թղթից սափորների մէջ զնելու համար և տալսվ իւր պստիկ Ռոբէրտին, ուղարկում էր նորան տները իրան շինած ծաղիկները ծախելու:

Այդ ծաղիկները, որոնք շատ գուր եկան Կատարինէին, յիրաւի ճաշակով ու գեղեցիկ էին, որովհետեւ իրանց պայծառ գոյներով ու ձևերով շատ նման էին իսկական ծաղիկների: Բայց չնայելով դորան, Ռոբէրտը դոցանից մի քանիմն էր միայն ծախել:

Այդ օրը նա առաւտոֆից առանց մի քան ուտելու, սկսել էր իւր գործը: Բոլորովին թուլացած, երկար ժամեր բարձր սանդուխաներից բարձրանալով ու իջնելով, նա վերջապէս լսեց Կատարինէի սիրալիր ձայնը, որ ասաց թէ՝ նորա մայրիկը բարի է և անկառկած կըգնէ այդ ծաղիկներից:

Նա ինչ երկար մնաց, ասում էր Ռոբէրտը, նախասենեալի կիսաբաց դրան առաջ ըստպասելով: Այդ լաւ աղջկայ մայրը նորա համար է այդքան երկար ժամանակ ընտրում, որ երկի ուզում է շատ փնջեր գնել, մտածում էր նա:

Եւ նա սպասում էր համբերութեամբ. բայց չափազանց յոգնած ու քաղցած լինելով, նա յուսահատուած ասում էր ինքն իրան՝ «ան, երանի թէ շուտով գար աղջիկը»:

Երբ Կատարինէն բաւական երկար ժամանակից յետոյ մտաւ իւր սենեակը, ինչ տեսաւ.՝ զամբիւզն աթոռի վերայից վայր է ընկած, կատուն ուրախ-ուրախ խաղալով զամբիւզի հետ, այս ու այն կողմն է զցել ֆընչերը և իւր ճանկերով բոլոր ծաղիկները տրորել, փչացրել ու պատուտել է:

Կատարինէն իսկոյն ամուր խփելով կատուին, խլեց նորա թաթերի միջից էլի մէկ փնջիկ, միւս ծաղիկները հաւաքեց յատակի վերայից և բոլորը գնելով զամբիւզի մէջ, տարաւ տուեց դրսի դրանը ոպասող տղային:

«Մայրիկս տանը չէ». ասաց նա. — «Թէ չէ շատ փնջիկներ կըգնէր. ես էլ փող չունեմ, որ որեէ բան առնեմ»:

Եւ այդ ասելով Կատարինէն դուռը ծածկեց ու կողպեց բանալիով ու ապա վաղելով ներս գնաց: Նա ուզում էր շուտով պատրաստել իւր միւս օրուայ գասերը, որ յետոյ կարողանար պարտէզ գնալ խաղալու:

Ռոբէրտը լսեց Կատարինէի խօսքերը. իմացաւ, թէ նա ինչպէս զուռը կողպեց և յան-

կարծ նկատեց, որ զամբիւղի մէջ եղած սիրուն ծաղիկները բոլորովին փչացած ու տրորուած են:

Այդ ժամանակ նա սկսեց գառն կերպով ու հեծկլտալով լալ. նա այլ ևս ոչ մի յօյս չունէր, որ այդ ծաղիկները կծախուին, որոնց վերայ իւր մայրն այնքան աշխատել ու չարշարուել էր: Ուրեմն նա պէտք է տուն գնար առանց փողի, առանց հացի, հետը տանելով այդ փչացած ծաղիկները... Եւ այդ արեց այն փոքրիկ աղջիկը, որը միսիթարեց յօյս տալով թէ իւր մայրը կդնէ շատ փնջիկներ:

Կամաց ու յոզնած քայլերով նա ցած իջաւ սանգուխտներից: Ծաղիկների վերայ նա ծածկեց մի կտոր շոր, որ գեռ ձեռքում բըռնել էր և այդ անելիս նորա աշքերը մթնեցին ու նորան թւաց թէ այդ գոյնզդոյն ծաղիկները պտոյտ են գալիս. նորա ոտքերն աւելի ու աւելի էին ծանրանում և քայլերն աւելի դանդաղանում: Եւ երբ նա այդ փողոցն անցաւ ու տար արել նորա երեսն այրել լսկեց, նա կարողացաւ էլի մի քիչ տարածութիւն միայն գնալ և մէկ տան առաջ իւր զամբիւղը գոգին վայր ընկաւ: Նորա գլուխը թերուել էր մի տան դրան կողմը և ինքն էլ ոշինչ չէր զգում:

Այդպէս նա երկար ժամանակ ընկած մընաց, որովհետև արեից տարացած փողոցում մարդ չկար: Վերջապէս այդ փողոցում երևաց մէկ տիկին, որը տեսնելով այդ տղային կանգնեց. նա կարծեց թէ տղան քնած է և կարող են նորա գողից զամբիւղը գողանալ, այդ պատճառով ուզեց զարթեցնել, բայց երբ մօտեցաւ, որ ձայն տայ, տեսաւ որ նորա ձեռքը սառն է և նա ուշաթափ է եղել:

«Խեղճ երեխայ», ասաց նա ցաւելով.— «կարող է պատահել, որ չոգից թուլացած լինի. սորան այստեղ թովնել կարելի չէ»:

Եւ նա խկոյն գնաց մինչե միւս փողոցի ծայրը, որտեղ վարձեց մի մշակ և խնդրեց, որ այդ երեխային վերցնէ. մշակը գետնից բարձրացրեց երեխային նորա զամբիւղի հետ միասին և կարճ միջոցից յետոյ ուշաթափ եղած Ռոբէրտը պարկած էր մի հով, սիրուս սենեալի տախտի վերայ:

Տիկինը շտապով բերեց սառը ջուր, բացախ ու գինի և սկսեց ջուր սրսկել նորա երեխին, բացախով ճակատն ու քունքերը տրուել և քիչ գինի լցրեց նորա բերանը:

Այդ ժամանակ Ռոբէրտն ուշի եկաւ և կանչեց՝ «մայրիկ, մայրիկ»:

«Դու, սիրելի փոքրիկ, քեզ ինչ է պէտք,
արդեօք մի տեղի ցաւնւմ է»:

«Ես սաստիկ քաղցած եմ, շնչաց պստիկ
տղան, կարծես թէ քնի մէջ լինէր»:

«Խեղճ երեխայ». ասաց բարեսիրտ տի-
կինը և խսկոյն սենեակից դուրս գնաց և մին-
չև որ նա ձեռքում բռնած մի ափսէով սպի-
տակ հայ ներս մտաւ, Ռորէրտը տախտի վե-
րայ դիք նստած, զարմացած ու վախվիսելով
նայում էր իւր շուրջը»:

«Ուր է մայրիկս», հարցրեց նա:

«Մենք խսկոյն նորան իմաց կըտանք, որ
գայ». հանգստացրեց նորան տիկինը. — «զեռ
առաջ առ այս հացը կեր ու մի թիշ էլ գինի
խմիր և յետոյ պատմիր, թէ որտեղ է ապրում
քո մայրը. դու երեխ այդ զամբիւլով նորան
բան էիր տանում, կամ թէ ուրիշ տեղ էիր գը-
նում և այդ բեռը բեզ համար ծանր լինելով,
թուլացել ու քնել էիր....»

Զատ քաղցած լինելով, Ռորէրտն ուտում
էր հացը վրայ պլրծած և ազահովթեամբ խը-
մում էր լաւ գինին: Յետոյ նա ասաց թէ որ-
տեղ է ապրում իւր մայրը. պատմեց թէ, ինչ-
պէս իրանք աղքատ են և մայրը արուեստա-
կան ծաղիկ է շինում ու տալիս է իրան, որ
տանի ծախելու և աւելացրեց՝ որ վերջին ժա-

մանակները բոլորովին չէ ծախուել, տան եղած
հացն էլ վերջացել է և ահա այսօր առաւոտ
ես ոչ մի բան չկերած իմ գործը սկսեցի, բայց
մինչև ճաշից յետոյ էլ ոչինչ չկարողացայ ծա-
խել: Յետոյ նա շարունակեց, ուտելուց քիչ
զուարժացած: — Ես մօտեցայ մի մեծ տան գը-
րանն ու զանգահարեցի. մէկ սիրալիր փորրիկ
աղջիկ դուռը բացեց և ասելով որ իւր մայրը
շատ բարի է ու անպատճառ մի բան կըգնէ,
առաւ ձեռքիցս զամբիւլը և ներս տարաւ: Դո-
րանից յետոյ դուրսը շատ երկար, երկար ըս-
պասեցի, մինչև որ աղջիկն յետ բերեց իմ զամ-
բիւլը, որի մէջ եղած բոլոր ծաղիկները փշա-
ցած, պատուած էին... Այդ տեսնելով ես
սաստիկ տխրեցի ու յուսահատուեցի և ուզեցի
տուն գնալ բայց շատ բաղցած ու դադրած
էի... Ահա այդքանն եմ յիշում միայն և էլ շգե-
տեմ թէ, ինչ պատահեց ինձ և ես հիմայ որ-
տեղ եմ:

Տիկինը զամբիւլի ծածկոցն յետ տարաւ
և տեսաւ տրորուած ծաղիկները:

«Դու ասում ես, որ մէկ աղջիկ այս առաւ
ձեռքիցդ, ներս տարաւ և յետոյ այսպէս փշա-
ցած նորից բեզ վերադարձեց. — բայց բեղ հետ
այդպէս վարուողը պէտք է որ շատ, շատ շար ու
թեթեամիտ լինի», ասաց նա կարեկցութեամբ:

Այդ ժամանակ սենեակի գուռը բացուեց և կատարինէն պարտէզում խաղալուց քրտնած, ներս մտաւ և զարմացած մնաց, երբ նոյն ծաղիկ բերող տղային տեսաւ իրանց տանը: Խսկ տղան իսկոյն բացականչեց՝ «ահա, այս աղջիկն էր իմ ծաղիկներս փշացնողը»:

«Կատարինէն է, ինչպէս... բայց անկարելի է... միթէ ուղիղ է, որ գու ես այդ արել». հարցրեց մայրը:

Կատարինէն սաստիկ կարմրեց և ասաց՝ «Ես կարծում էի, թէ գու կը գնես այդ փընքերից և առայ զամբիւղն ու ներս բերի, դրի աթոռի վերայ. յետոյ գնացի քեզ փնտրելու: Այդ ժամանակ կատուն զամբիւղը վայր էր գցել ու սկսել էր ծաղիկների հետ խաղալ. ես չգիտէի, որ այդքան փշացել են ծաղիկները. ես այդ չար մտքով չարի»:

«Ես համոզուած եմ, որ գու այս խեղճ երեխային դիտմամբ չես վիրաւորել». ասաց մայրը. — «Բայց այն, ինչ որ գու արել ես, դարձեալ անմիտ բան է և ես ուրախ եմ, որ դէպրը բերեց ինձ, բո վատ վարմունքի փոխարէն, սորան օգնելու»: Եւ քաղցրութեամբ դառնալով դէպի Ռոբէրտն ասաց՝ «Ես կվճարեմ այն բոլորի համար, ինչ որ աղջկաս պատճառով վնասուել է և նոյնպէս կը տեղեկանամ բո մօր մա-

սին ու կը հոգամ նորա պէտքեռը, կօգնեմ նորան»:

Եւ մայրը պատմեց կատարինէին, թէ ինչպէս այդ խեղճ տղային, որը բաղցածութիւնից, յոգնածութիւնից ու ծաղիկների փշանալուց վախեցած և յուսահատուած, հարևան տան դրան առաջ ընկած գտաւ և հետը բերեց տուն, որ նորան ուշըի բերէ և էլի ասաց այն ամենն, ինչ որ Ռոբէրտը պատմել էր իւր մօր նեղ վիճակի մասին:

Կատարինէն երբ լսեց այդ բոլորը, նորա աչքերից արտասուքը վագեց և խոստովանուեց՝ որ ճշմարիտ իւր արածը «չար մտքով չէ», միայն զամբիւղի և տղայի մասին մոռացել էր և կատուն այդ միջոցին ժամանակ էր գտել ծաղիկները վիշացնելու:

«Աշխարհիս երեսին ամեն վատ բան չարութիւնից չէ առաջ գալիս, այլ շատ անդամ թեթևամտութիւնից, մոռացկոտութիւնից և անհոգութիւնից». ասաց մայրը:

Այդ միջոցին նոցա աղախինն արգէն գնացել էր Ռոբէրտի մօրը կանչելու, որը շատ վախեցել ու անհանգիստ էր եղել, որդու այդքան ուշանալու համար: Եւ երբ նա եկաւ այդ բարեսիրտ տիկնոց մօտ, որն իւր Ռոբէրտին օգ-

նել էր, սրտանց ու զերմ չնորհակալ եղաւ նորանից:

Կատարինէի մայրը վճարեց փշացած ծաղիկների գինը և Ռոբէրտի մօր պատմածից տեղեկացաւ, որ նա շատ լիշուառ դրութեան մէջ է:

Դորանից յետոյ փոքրիկ Ռոբէրտը մօր հետ միասին հեռացաւ իւր բարերարուհու տանից:

Բարեգութ տիկինը Ռոբէրտի մօր համար զանազան տեսակ արդինաւոր աշխատանք գլւտաւ և այգալէսով խեղճ կինը կարողանում էր հոգալ իւր ցաւերը և էլ շատ նեղութիւն չէր բաշում և Ռոբէրտին էլ չէր ուղարկում իւր ձեռագործը ծախելու:

Երբ նոցա դրութիւնը բաւական լաւացաւ այն բարի տիկնոջ չնորհիւ, Ռոբէրտը սկսեց դպրոց գնալ և աշխատասէր, ընկերասէր ու համեստ տղայ լինելով, շատ էր ուրախացնում և մխիթարում իւր մօրը:

Կատարինէն աւելի հոգատար դառաւ և ժամանակին սովորեց հաշիւ տալ այն ամեն բանի մասին, ինչ որ խօսում և անում էր:



00004482

ՀՀԱ

2013





